ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՂ ԿՈՄԻՏԵԻ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Հոկտեմբերի 13—17-ը Էյզենախի (ԳԴՀ) համանուն հյուրանոցի հանդիսությանց դահլիճում գումարվեց Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի Աշխատանքները շարունակող կոմիտեի հերթական նստաշրջանը՝ Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության ԽՔԿ-ի տեղական կազմակերպության հրավերով:

Նստաշրջանի բնաբանն էր՝ «Աստծու խոստումը և մեր պատասխանատվությունը, —քրիստոնյաները հանուն աշխարհում վստահության հաստատման, լարվածության թուլացման, զինաթափման և արդարության»:

Ներկա էին Եվրոպայի, Աֆրիկայի, Ասիայի, Ավստրալիայի, Հյուսիսային և Հարավային Ամերիկայի (43 երկրներ) Եկեղեցիների 249 ներկայացուցիչներ, դիտորդներ, լրագրողներ, հյուրեր:

Հայ Եկեղեցու կողմից նստաշրջանի աշխատանքներին մասնակցեց Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի Մերձավոր և Միջին Արևելքի հատուկ հանձնաժողովի նախագահ տիար Հովհ. Թոփուզյանը:

Նստաշրջանը բացվեց ԽՔԿ-ի Աշխատանքները շարունակող կոմիտեի նախագահ, Կինի և Գալիցիայի միտրոպոլիտ Ֆիլարետի ներածական խոսքով:

Աղոթքից հետո հրապարակվեցին ԳԴՀ Պետական խորհրդի նախագահ Էրիկ Հոնեկերի, Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբություն Պիմենի և այլ պաշտոնական անձանց ողջույնները:

Այնուհետև ԽՔԿ-ի նախագահ Կարոլի Տոթը, միտրոպոլիտ Ֆիլարետը և ընդհանուր քարտուղար դոկտ. Լ. Միրեժովսկին հաջորդաբար հանդես եկան ընդարձակ զեկուցումներով, նվիրված հաշվետու ժամանակաշրջանում (1978—1980) ԽՔԿ-ի ծավալած գործունեությանը:

Լսվեցին նաև Անգլիայի մեթոդիստ Եկեղեցու երեց Էմիլիո դե Կարվալհոյի, ԱՄՆ-ի Եկեղեցիների միության միջազգային կոմիտեի նախագահության անդամ պրոֆ. Լամար Գիպպլի և ԳԴՀ միջազգային քաղաքականության և տնտեսության ինստիտուտի գիտաշխատակից պրոֆ. Հերբերտ Բերցչի զեկուցումները, որոնցում համակողմանիորեն վերլուծված էր արդի միջազգային քաղաքական տագնապալի իրավիճակը և ցույց տրված քրիստոնյաների անելիքները՝ աշխարհում վստահության հաստատման, լարվածության թուլացման և զինաթափման գործում: Այդ հարցերի շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն:

Պլենար նիստերում առաջ քաշված գլխավոր հարցերի քննարկումը շարունակվեց հետևյալ չորս աշխատանքային բաժիններում.

1. «Խաղաղության աստվածաբանական հարցեր»:
2. «Լարվածության թուլացում, զինաթափում և անվտանգություն»:
3. «Համերաշխություն, ազատագրություն և զարգացում»:
4. «ԽՔԿ-ի գործունեության ծրագիր և աշխատանքի մեթոդներ»:

Յուրաքանչյուր բաժնում լսվեց մի հիմնական, ընդհանրացնող զեկուցում՝ որպես մտքերի փոխանակության հիմք, և առանձին հարցերի վերաբերյալ հաղորդումներ: Երկրորդ բաժնում ներկայացվեց նաև Հովհ. Թոփուզյանի հաղորդումը՝ «Զինարշավը Մերձավոր և Միջին Արևելքում» թեմայով:

Աշխատանքային բաժիններում կատարված քննարկումների արդյունքներն ամփոփվեցին վերջին պլենար նիստում և ընդունվեցին մի շարք բանաձևեր՝ Լատինական Ամերիկայի, Աֆրիկայի, Մերձավոր և Միջին Արևելքի, Իրաք-Իրան զինաբախման, լարվածության թուլացման, զինաթափման և այլ հարցերի վերաբերյալ:

Վերջում նստաշրջանի մասնակիցների պատվին կազմակերպվեց կառավարական ընդունելություն, որտեղ նրանց ողջունեց ԳԴՀ եկեղեցական գործերի պետական քարտուղարը: